Խ

ԿԵՍԱՐԻՈՅ (ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ) ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ ԵՒ ԱՆՈՐ ԵԿԵՂԵՑԻՆ

---

1. Կեսարիոյ պատմութիւնը.

Պլինիոս երկու տողով Կեսարիոյ պատմականը կ'ընէ. «Straton-ի աշտարակը, որ է Կեսարիա, շինուած է Հերովդէս Թագաւորէն, և այժմ կը կոչուի Colonia Prima Flavia՝ հաստատուած Վեսպասիանոս կայսրէն»: Յովսեպոս երկարօրէն կը պատմէ և քիչ մը չափազանցութեամբ, ինչ որ կատարեց Հերովդէս այդ տեղը վերածելու գեղեցիկ նաւահանգիստի և քաղաքի մը՝ որ մինչև այն ժամանակ գրեթէ անապատ մ'էր, ուր յոյն արկածախնդիր մը՝ Straton անուն, մտածած էր ապաստանարանի աշտարակ մը շինելու: Հերովդէս նախանձախնդիր ամէն տեղ մեծ քաղաքներ հիմնելու, նոյն աշտարակին տեղը յարմար տեսաւ շինելու ապահով նաւահանգիստ մը: Ան Հռովմայեցւոց նմանելու մարմաջով հիմնարկեց Կեսարիա քաղաքը. նաւահանգիստին մուտքին վրայ՝ մեծ խոշոր քարերու վրայ զետեղեց հսկայական արձաններ՝ որոնք աջ ու ձախ կը զարդարէին. Յովսեպոս զանոնք իր չափազանցութեամբը կը նմանցնէ Բիրէի նաւահանգիստին: Հոն շինեց կամարակապ շտեմարաններ, ինչպէս այդ կերպ շինուածքներ կը տեսնուին Ոստիի, ինչպէս նաև Կենքրայի մէջ, և անոնք կ'ընդունէին ապրանքները, կամ իբր ապաստանարան կը ծառայէին նաւաստիներուն, մինչ քաղաքին բնակիչները կ'զբօսնուն իբր ճեմելավայր շինուած քարափներու վրայ: Կեսարիա շինուած է ամփիթատրոնի ձևով, աւելի հեթանոսական քաղաք էր քան թէ հրէական. ունէր իր մեհեանները, պալատները, իր վիթխարի արձանները և յիշատակարանները: Երբ կը մտածենք թէ այդպիսի կարևոր քաղաք մը տասն երկու